

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԴԱՅՐ ԱԹՈՒՍ. ԷՋՄԻԱՇԵՆ



SUPREME PATRIARCH  
CATHOLICOS  
OF ALL ARMENIANS  
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

1266

20 Դեկտեմբեր 1996

ԳԵՐԱՇՆՈՐՀ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ

ԵՐՈՒՍԱԳԷՄ

Սիրելի Սրբազան եղբայր.

Սրտի խոր վշտով այսօր իմացամք Ձեր մամակեմ երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան բազմավաստակ և հաւատարմագոյն անդամներէն Տ. Նորայր Արքեպիսկոպոս Պողոսեանի վախճանման տխուր լուրը:

Իր մահով Հայց. եկեղեցին և հայ դպրութիւնը կը կորսնցնեն Քրիստոսի եկեղեցւոյն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և հայագիտութեան երախտարժան դէմք մը, որուն վաստակը վստահաբար պիտի մուսնէ իր մահը և դառնայ մերշնչման և սնուցման աղբիւր նոր սերունդներուն համար:

Ն. ՄՈՎԱԿԱՆ անունով յանախ իր յօդուածներն ստորագրած և իր գիրքերը մակագրած Նորայր Սրբազանը երբեք պիտի չմոռցուի հայ հոգիին, հայ տաղանդին, հայ հաւատքին, հայ մշակոյթին սէրն ու հաղորդութիւնը ունեցող սերունդներուն կողմէ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեամբ և Գերագոյն Հոգևոր Խորհուրդով և հաւատացեալ ժողովուրդով կը բաժնէ Ձեր և Միաբանութեանդ վիշտը: Կ'աղօթենք առ Բարեգութն Աստուած որ իր բարի և յոգնասպառ հոգին ընդունի երկմային երանական խաղաղութեան մէջ: Թող Բարձրեալն Աստուած մոր սպասաւորներ յարուցամէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեանդ առաքելութեան անդաստանին մէջ:

Կիրակի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ յատուկ հոգեհանգստեան արարողութիւն պիտի կատարուի ընդ Մեր Ախագահութեամբ իր հոգւոյ խաղաղութեան համար:

Եղբայրական սիրոյ ողջունիւ և վշտակցութեամբ.

Աղօթարար

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հ. Գ. Հանեցէ՛ք յարմարագոյն և մօտաւորագոյն ժամանակին Մեզի ուղարկել իր կենսագրականը, որպէսզի "Էջմիածին" ամսագրի մէջ պատշաճ և արժանի ձևով անդրադարձ ըլլայ իր անձին, կեանքին և գիտական ու գրական վաստակին:



# ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻՆԻԱՍ – ԼԻԲՆԱՆ

Թիւ 430/96

Անրիլիա 20 Դեկտեմբեր, 1996

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան  
Պատրիարք Հայ Երուսաղէմի  
Երուսաղէմ.

Սիրելի՛ Պատրիարք Սրբազան,

Զեր կողմէ առաքուած յատուկ նամակին նամբով քիչ առաջ խոր ցաւով իմացանք մահը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան բազմամեայ միաբան՝ Գերաշնորհ Տ. Նորայր Արքեպսկ. Պողարեանին: Հանգուցեալը իր բանասիրական հսկայ վաստակով մեծ ծառայութիւն մատոյց հայ մատենագրութեան եւ ընդհանրապէս հայագիտութեան: Ան դարձաւ 20-րդ դարու հայ եկեղեցւոյ հոգեմտաւոր զագաթներէն մէկը՝ Օրմանեաններու, Դուրեաններու, Գուշակեաններու կարգին, որոնք հայ եկեղեցւոյ մշակութային արժէքները կենսագործեցին մեր ժողովուրդի կեանքին մէջ իրենց բանասիրական հմտութեամբ, հետեւողական աշխատանքով ու լուրջ պրպըտումներով:

Այս տխուր առիթով Ձեզի եւ Ձեր գլխաւորած Երուսաղէմայ Առաքելական Աթոռին զինուորեալ Միաբանութեան կը յայտնենք Մեր խոր ցաւակցութիւնը: Թող Աստուած լուսաւորէ բազմավաստակ հոգեւորականին հոգին եւ Ձեզի պարգեւէ քաջառողջ կեանք եւ հարուստ իրագործումներով լեցուն երկար գահակալութիւն:

Եղբայրական սիրոյ ջերմ ողջունելի,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



**ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
ԳՈՒՄԳԱԲԸ - ՍՏԱՆԳՈՒԼ



**ARMENIAN PATRIARCHATE**

TR - 34480 KUMKAPI - ISTANBUL

Tel. : (90-1) 517 0870 or 71

Fax : (90-1) 516 4833

20 Դեկտեմբեր 1996

003760

Ամենապատիւ,

Տ. Թորոսյան Բ

Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի  
Երոստողէմ

Ամենապատիւ Իշխան,

Այսօր տեղեկացանք թէ Հայ Եկեղեցւոյ հւ Ս. Յակոբեանց Միաբանութեան  
Հոգեւոր ղաւարն երիցապսն Հոգեւորական, Տ. Նորայր Ս. Արքեպս. Պողարեան իր  
Հոգին ասանդած է Երկնայի շոր ձեռքերուն մէջ:

Հոգեւոր Տ. Նորայր Արքեպսկոպոս ոչ միայն իր ղեկավարող Հոգեւորական  
մը Ս. Յակոբեանց Միաբանութեան շարքերէն ներս, այլ նաեւ Համբարատար  
աշխատանքով իր անկորնչելի ծառայութիւնը բերաւ Հայ Բանասիրութեան:

Յանուն մեր Աթոռոյն Հոգեւոր ղաւարն եւ Հաւատացեալ Ժողովուրդին կու  
գանք յուսկցութիւն յայտնել Ձեր հղորայրութեան, Ս. Յակոբեանց Միաբանու-  
թեան եւ կ'աղօթենք առ Բարձրաւն Աստուած զի «յիշեսցէ հւ ողորմեսցի ի Հոգի  
ծառային իւրոյ հւ պաշտօնէին, որ ուղիւ վարդապետութեամբ Համառատաց  
զԲանին ճշմարտութեան հւ Հանդուսդէ ղեալ այցելութեամբ ի լոյս երեսաց Իւրոց»:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

Աղօթակից՝

*Գարեգին Բ*

Գարեգին Բ

Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ

ΕΛΛΗΝΟΡΘΟΔΟΞΟΝ ΠΑΤΡΙΑΡΧΕΙΟΝ  
ΙΕΡΟΣΟΛΥΜΩΝ



GREEK ORTHODOX PATRIARCHATE  
JERUSALEM

No. 955

His Beatitude  
Patriarch **Torkom Manoogian**  
Armenian Patriarchate  
P.O. Box 14235  
Jerusalem

Your Beatitude,  
Our Beloved Brother in the Lord,

We express deepest condolences to Your Beatitude and the Armenian Patriarchate of Jerusalem for the passing to the Lord of His Eminence, Archbishop Norayr Bogharian.


We, and the entire Brotherhood of the Holy Sepulchre of the Greek Orthodox Patriarchate of Jerusalem, are most saddened to learn of Archbishop's Norayr's passing and We assure Your Beatitude of prayers raised from the Holy and Lifegiving Tomb of Our Lord, Jesus Christ, for the blessed eternal repose of His Eminence's soul in the bosom of Abraham.

With brotherly love in Christ, We remain,

DIODOROS I  
Patriarch of Jerusalem

Jerusalem  
Friday, January 10, 1997





# PATRIARCHATUS LATINUS - JERUSALEM

Jerusalem, December 22, 1996

*Your Beatitude*

*I present to You my fraternal and sincere condolences for the death of His Eminence Archbishop Nowayr Bogharian, member of the Armenian Patriarchate of Jerusalem and the Brotherhood of St James, whom the Lord called back to him in these days of preparation for his first coming and apparition on earth.. With you we have prayed for him, may God give him his eternal light, joy and peace.*

+ *Michel Sabbah*  
+ Michel Sabbah, Patriarch

ZCZC YIV546 LBR212 INC080 FX8796  
ILJM CO PCLS 062  
LISBOA/FAX 62/53 27 1225

SA BEATITUDE TORKOM MANOOGIAN  
PATRIARCHE ARMENIEN DE JERUSALEM  
BOITE POSTALE 14235  
JERUSALEM-EST/ISRAEL  
JERUSALEM

AMENABADIV SERPAZAN HAYR, MEDZ DEKHROUTAAMB KOUJETSINK VAKHDJANOUME  
KERACHNORN NORAYR SERPAZANI. I SERDE DZEZ YEV MIAPANOUTEANT  
ANTAMNEROUN GUE HAYDNENK MER TSAVAKTSOUTIOUNNERE, HAY JOGHOVOURTE  
GORSENTSOUTS IR MEDZ ZAVAGNEREN MIN, TOGH ASDOUADZ HOKIN LOUSSAVORE  
YEV ANSASSAN BAHE ARAKELAGAN SOURP ATORE.  
VORTIAGAN ZGATSOUNNEROV  
ZAVEN YEGAVIAN



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՏՈՑ ԱՄԵՐԻԿԱԾԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

20 Դեկտեմբեր 1996

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Պատրիարք Առաքելական Աթոռոյ Ս. Երուսաղէմի  
Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր

Խորունկ ցաւով իմացանք վախճանումը Գերշ. Տ. Նորայր Արք. Պողոսեանի  
հիմզաբթի օր: Նորիմ Սրբազանութեան մահը մեծ կորուստ է Հայաստանէայց  
Եկեղեցւոյ Առաքելական Աթոռոյ, եւ մանաւանդ Քայ քանասիրութեան Քամար  
Անձնապէս ճան կ'ողբամ կորուստը ուսուցիչի մը, որ իր աշխատասիրութեամբ եւ  
քննադատութեամբ լաւագոյն օրինակը Քանդիսացաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ  
Հանձնարանի երբեմնի իր աշակերտներուն:

Նորայր Սրբազանի կորուստը կ'ողբայ ճան մեր թեմի քոյր մտաւորականութիւնը  
եւ հոգեւորականաց դասը, որոնց մէջ կան շատեր իր աշակերտներէն:

Արքազանը իր բազմադիմ վաստակով, անբասիր կեանքով եւ մոլորումով  
Հայաստանէայց Եկեղեցւոյ ամենախաւաքաւ սպասաւորը Քանդիսացաւ: Աստուած  
Քանգոյցեալ Սրբազանի հոգին երկնային լոյսերու մէջ հանգչեցնէ:

Այս տխուր առիթով կը փոխանցեմ Զեզի մեր թեմի հոգեւորականներուն,  
պատկան իշխանութեանց, եւ Քամայն ժողովուրդի ցաւակցութիւնը: Բոլորիմ քաղձաքն է  
որ Աստուած Սրբոց Յակոբեանց միաբանութեան շարքերէն պարգեւէ մոր Նորայր  
Սրբազաններ ի պաշտոնութեան Հայաստանէայց Եկեղեցւոյ:

Մասնաւոր ի Քամբոյր Զերդ Սրբազանութեան Ա. Աջոյն  
Որդիական սիրով՝

Խաժակ Արք. Պարսամեան

Խաժակ Արք. Պարսամեան





# ԱՌԱՋՆՈՐՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՊՐԱՉԻԼԻ DIOCESE DA IGREJA APOSTOLICA ARMENIA DO BRASIL

ՏԱԹԵԼԻ ԱՐԺԵՊՍ. ՂԱՐԻՊԵԱՆ - ԱՌԱՋՆՈՐԴ  
ARCEBISPO DATEV KARIBIAN PRELADO TITULAR

Սան Փաւլօ, 17 Յունուար 1997

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան

Բարեխնամ Պատրիարք Առաք. Սրբոյ Աթոռոյն

Երուսաղէմ:

Շատ սիրելի Սրբազան,

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն ուղարկուած հաղորդագրութենէ մը տեղեկացայ Նորայր Արքեպս. Պողարեանի վախճանումը:


Սրտի խոր վշտով, կու գամ Ձերդ Ամենապատուութեան եւ Միաբանակից բոլոր եղբայրներուս, յայտնել ցաւակցութիւններս այս անփոխարինելի կորուստին առթիւ:

Արդարեւ Նորայր Սրբազան, եղաւ հաւատաւոր, աւանդապահ եւ Ուխտին գիտակից նուիրեալ օրինակելի հոգեւորական մը, որ կեանքով, գործով եւ վարքով, երախտապարտ կը թողու իր բազում աշակերտները եւ միաբանակից եղբայրները, որոնց տիպարը եւ ներշնչող անձը եղաւ իր կեանքի մօրողջ ընթացքին:

Թող Անմահութեանց Տէրը վարձատրէ զինք, իր հոգին արժանացնելով իր երկնային, Յաւիտենական եւ Երանաւէտ կեանքին մէջ: Ձերդ Ամենապատուութեան եւ համայն Սրբոց Յակովբեանց միաբանութեան շնորհէ Ս. Հոգիի Մխիթարութիւն եւ առաւել նուիրումի եւ ծառայութեան անսպառ հոգի՝ Ս. Գլխադրի շնորհատու հովանիին տակ. ամէն:

Այս կիրակի եկեղեցւոյս մէջ, ի լուր մեր հաւատացեալներուն, պիտի կատարենք մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն, Նորայր Սրբազանի Հոգւոյն խաղաղութեան:

Ձերդ Աղօթակից՝

  
Տաթեւ Արք. Նարիպեան  
Առաջնորդ Պրագիլահայոց  
եւ Միաբան Ս. Աթոռոյ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ  
ԱՐԺԱՆԿՈՒՆԻ ԹԵՍ՝



IGLESIA APOSTOLICA ARMENIA  
ARQUIDIOCESIS DE ARGENTINA

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ 6 ՅՈՒՆԻՍԻՍ 1997

Ս.ՄԵՆԱՊԱՏԻՈՒ

ՏԵՐ ԹՈՐԻՈՒՄ ԱՐԲԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՐԱՐԵՆՆԱՄ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍՍԷԼԻՄ

Ամենապատիւ Պատրիարք Սյրազան Հայր,

Թիեւ ինչ մը ուշացած սակայն ամօքեղծօրէն կը յայտնեմ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կեդրոնական Վարչութեամբ, Ազգային Առաքնորդարանի եւ մեր հոգեւոր դասում ու հաւատացեալներուն կողմէ, մեր խոր ցաւակցութիւնները Տէր Նորայր Արքեպս. Պողոսեանի մահաւան տոբով: 28 Դեկտեմբերի Սիրակի օր հողեկամգիտա կառարեցինք մեր բոլոր եկեղեցիներուն մէջ: Տէրը լուսաւորէ հոգեկոյս Սրբազանի հոգին եւ Ձեզ ու Սրբոց Յակարեանց Միաբանութիւնը մխիթարէ Ս. Հոգիով:

Աւիթէն օգտուելով Ձեզ եւ Միաբանակից եղբայրներս կը շնորհատորեմ Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով, մաղթելով ամէն բարիք եւ մահաւանդ խաղաղութիւն եւ յաջողութիւն: Թող մահուկ Յիսուսը ըլլայ աշխարհին խաղաղութիւն քերող Պրկիչը, եւ մասնաւորաբար Ս. Քաղաքին եւ բոլոր շրջակայ երկիրներուն:

Մատչելով ի համբոյր Ձերոյ Սուրբ Աջոյն  
մնամ որդիական խոնարհութեամբ

ԴԻՍԱԿ ԱՐԲԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Յ. Դ. Այստեղի պարտականութիւններուս պատճառով պիտի չկարենամ Ծնունդին Նրուսադէմ գալ: Աստուած ուզէ ուրիշ առիթով եւ աւելի երկար ժամանակով կուգամ:

Ողջը՝

ԴԱՄ



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՒՍՏՐԱԼԻՈՑ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԱՅԻ

Առաքելոց  
ԱՂԱՆ ԱՐԲԵԿԱՍ. ՊԱԼԻՈՋԻԱՆ

All correspondence to:  
P.O. Box 694, Chatswood 2067  
Sydney, Australia



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH  
OF AUSTRALIA AND NEW ZEALAND

Primate  
ARCHBISHOP AGHAN (ITALIAN)

Diocese 468 Pittwater Road, N. Manly, 2100  
Phones (02) 419 8056, 419 38 4816  
Fax: (02) 413 1709

Նորին Ամենապատուութիւն

Տ. Թորգոմ Ա. Արքեպս. Մանուկեան  
Բարեխնամ Պատրիարք Ա. Երուսաղէմի  
Երուսաղէմ  
-----

Ձերդ Ամենապատուութիւն,  
Խոր վշտով ու զուով ստագայ Նորայր Արքազանի վախճանման  
գոյժը: Մեծ կորուստ մըն է Արքեպ. Յակոբեանց Միաբանութեան համար.  
Միևնոյն ժամանակ մեծ կորուստ մըն է Հայց. Եկեղեցիին, Հայ Բանա-  
սիրութեան ու մատենագրութեան համար:  
Անկասկած իր վախճանումը կը սգայ նաեւ Հայրենի աշխարհն  
ու բանասիրական շրջանակը:  
Այս մեծ կորուստին առիթով րնդունեցէր իմ խոր գաւակցու-  
թիւնը միաբանութեանս երիցագոյն անդամին համար: Գաւակցութիւն՝ Միաբանութեան  
Հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւն պիտի կատարենք  
վախճանել Նորայր Արքազանի համար:

Վշտակից՝

Աղան Արքեպս. Պալիօգեան

Աղան Արքեպս. Պալիօգեան  
Առաջնորդ

21 Նոյեմբեր 1996  
Միտի Աւստրալիա



**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵՍՆ ԲՐԻՏԱՆԻՈՑ**  
**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF GREAT BRITAIN**

**Archbishop Yeghlshe Glezirian, Primate**

27 Յունուար, 1997

Նորին Ամենապատուութիւն

Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան

Պատրիարք Առաքելական Աթոռոյ Սրբոց Ժակոբեանց  
 Երուսաղէմի

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան,

Այսու կուգամ իմ խորագգաց ցաւակցութիւնները յայտնելու Ձերդ  
 Ամենապատուութեան բազմապատակ մտաւորական եւ հմուտ քսնասէր  
 Դերաշնորհ Տ. Նորայր Արքեպիսկոպոս Պօղարեանի վախճանման տխուր  
 առթիւ:

Կիրակի, 26 Յունուար հկեղեցւոյս անուան տօնին առթիւ Հոգեհանգստեան  
 պաշտօն կատարուեցաւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ հանգուցեալ Սրբազան Հօր  
 հոգւոյն համար:

Թող Բարձրեալն Աստուած լուսաւորէ հոգւոյս Սրբազանի հոգին եւ  
 Ս. Հոգւոյն մխիթարութեամբ զօրացնէ եւ սփռփէ Ձերդ Ամենապատուութիւնն ու  
 Միաբանութիւնը:

Մնամ սիրոյ ողջունիւ

Աղօթակից

*Եւսէ Եղիշէ Երզնկեան*

Եղիշէ Արք. Կիզիրեան  
 Առաջնորդ Հայոց Անգլիոյ





**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**  
**THE ARMENIAN PRELACY**

Դեկտեմբեր 20, 1996

Թիւ 621/96

Ամենապատիւ


Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
 Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
 Երուսաղէմ

Սիրելի Պատրիարք Սրբազան,

Խոր վշտով իմացանք վախճանումը Ս. Աթոռիդ բազմամեայ միաբան եւ մեծ բանասէր՝ Գերշ. Տ. Նորայր Արքեպիսկոպոս Պողարեանի: Բանասիրութեան մէջ իր թողած կոթողական վաստակը՝ վստահաբար մնայուն եւ արժանի տեղ մը կ'ապաստովէ իրեն Ռամար ամենամեծ եւ երախտաշատ Ռայագէտներու շարքին:

Կ'աղօթենք իր Ռոգւոյն խաղաղութեան Ռամար: Զերդ Ամենապատուութեան եւ Երուսաղէմի Ս. Աթոռի միաբանութեան կը յայտենք մեր խոր ցաւակցութիւնը:

Եղբայրական սիրոյ ողջունի՝

  
 Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան

Prelacy of the Armenian Apostolic Church of America

138 East 39th St., New York, N.Y. 10016 (212) 689-7810

ՓԱՐԻԶ, 22 Դեկտեմբեր, 1996

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Ա. Արքեպիսկոպոս Մանուկեան

Բարեխնամ Պատրիարք Հայ Երուսաղէմի

Սուրբ Քաղաք Երուսաղէմ,

Սրբազան Պատրիարք Հայր,

Խորունկ ցաւով տեղեկացայ գոժը, մեր սիրեցեալ անխոնջ վաստակաւոր երիցագոյն միաբանակցին՝ Նորայր Սրբազանին վախճանումը, ինտելանք՝ որքան իր յառաջացեալ տարիքին, նոյնքան եւ տարիներու իր երկար ինտանդութեան:

Այսօր Փարիզի Հայոց Մայր Եկեղեցւոյ մէջ յիշատակուեցաւ անոր անունը, աղօթելով որ բարին Աստուած ի լոյս երեսաց արքայութեան արժանացնէ զինք, եւ իր անմեռ յիշատակովը վերանորոգուի իրմով վերապրող Միաբանութիւնդ, մեր օրերուն իրմէ ետք եկող սերունդները նոյնպէս ինչպէս արժէքներու պահպանման եւ ծանօթացման, միջազգային բարձրագոյն աստիճաններուն վրայ պահելով՝ Հայագիտութիւնն ու Հայ Մատենագրութիւնը:

Հոգելոյս Նորայր Սրբազան, երախտանուէր սիրով արդարացուց իր միաբանական պարտքն ու պարտաւորութիւնները, ի ինքնակա իր շուրջը տիրող բոլոր տեսակի ալեկոծումներուն, միշտ մնալով անգերազանցելի մոնազը, մեր օրերու ճգնադրութեան:

Լոյս եւ օրհնութիւն իր յիշատակին, եւ երկնային մխիթարութիւն Զեզի եւ Զեզմով գլխաւորաբար միաբանութեանդ:

Մնամ միաբանական վշտակիր սիրով, ի համբոյր

Զերդ Ա. Աջոյն

Խոնարհ Որդիդ՝

*Սրբազան Թորգոմ Ա.*  
Ժիրակի Ծ. վրդ. Թաշճեան





Սո-րբ Գրիգոր Լուսա-որիշ Մայր Տաճար  
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur  
St. Gregory The Illuminator Armenian Cathedral

Տ. Արարատ Վրդ. Գալթագճեան, Հովի  
Très Rév. Père Ararat Kallakjian, Pasteur  
Very Rev. Fr. Ararat Kallakjian, Pastor

Տ. Բարթող Ա. ՋԱԳՂ. Խրթագճեան, Պատուական Հովի  
Rév. Père Partogh Hirkaclyan, Pasteur Émérite  
Rev. Fr. Partogh Hirkaclyan, Emeritus Pastor

Դեկտեմբեր 20, 1996

Ամենապատիւ  
Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան  
Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
Երուսաղէմ, Իսրայէլ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ստացանք գոյժը Գերաշնորհ Տ. Նորայր Ս. Արք. Պողոսեանի վախճանման, որը  
խորապէս ցնցեց բոլորս:


Նկեղեցւոյս Հոգևոր ու Պատուական Հովիւները, Միական Խորհուրդն ու Յարա-  
կից Մարմինները և հաւատացեալ անդամները ցաւակից են Միարանութեանդ ու  
կը սգան մահը՝ այդ բացառիկ անհատականութեան:

Մարդկային Բարձր առաքինութիւններով ազնիւ հոգևորականի, հմուտ, ջանասէր  
ու բազմաբնուում գիտնականի տիպար մըն էր Գերաշնորհ Տ. Նորայր Արք. Պո-  
ղոսեանը որուն շուրջ մէկ դարեայ կեանքն արդիւնաւորութեամբ լաւագոյն կեր-  
պով ի պարծանս Հայց. Առաք. Ս. Նկեղեցւոյ և ազգային մեր մշակոյթի:

Անգնահատելի է վաստակը՝ զոր ան թողուց և անչափելի մօրմօքը որ կը պատ-  
ճառէ անոր վախճանումը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. Ամէն»:

Մատչիմ Ի համբոյր Ձերդ Օծեալ Ս. Աշոյն՝

  
Արարատ Վրդ. Գալթագճեան  
Հոգևոր Հովիւ



*Very Reverend Father  
Anoushavan Tanielian, Pastor*

## SAINT SARKIS ARMENIAN APOSTOLIC CHURCH

### ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

98/96

27 Դեկտեմբեր, 1996

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Մանուկեան

Պատրիարք Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռոյն

Երուսաղէմ

Պատր. Սրբազան Հայր,

Խոր ցաւով իմացանք Ձեռագրաց ցուցակագրման եւ Քայ Մատենագրութեան ու բանասիրութեան Նախապետ՝ Ռոզելոյս Տ. Նորայր Ս. Արքեպս. Պօղարեանի վախճանումը:

Կ'աղօթենք որ Աստուած երկնային լուսոյ խորաններուն մէջ Քանգչեցնէ Ռոզեմտաւոր լոյսի սիրաճար եւ տարածիչ մերօրեայ "Եռամեծար Վարդապետ"ի Ռոզին: Կը մաղթենք նաեւ, ինչպէս որ Եղիայի մաշկեակը Եղիսէի փոխանցուեցաւ, նմանապէս ծով գիտութեան շտեմարան՝ Ծովականի ոգին ծովանայ Սաղիմական երիտասարդ նուիրեալներու սրտերուն մէջ, ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ ի ծաղկումն Հայ Մշակոյթի:

Յառաջիկայ Կիրակի, 29 Դեկտեմբեր 1996, յաւարտ Ս. Պատարագի, Սրբազան Ռօք Ռոզւոյն Քամար պիտի կատարենք պաշտօնական Ռոզեճանգիստ:

Մատչելով ի Քամբոյր Ջերդ Ս. Աջոյն,

որդիական խորին ակնածանօք,

ԱՆՈՒԾԱԽԱՆ Ծ. ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ  
ՀՈՎԻԻ



School of Continuing Studies,  
University of Birmingham,  
Birmingham, B15 2TT,  
U.K.  
Tel: 0121-414-5602 or 5606  
Fax: 0121-414-5619

His Eminence Archbishop Torkom Manoogian,  
Armenian Patriarch of Jerusalem,  
P.O. Box 14235,  
Jerusalem,  
Israel

9 January, 1997

Your Eminence,

I am writing to offer my sincere condolences on the passing away of His Eminence Archbishop Norayr Bogharian on Thursday, December 19, 1996.

I was honoured to have had the opportunity to meet His Eminence on several visits to Jerusalem, in particular to work in the Library of the Armenian Patriarchate. Archbishop Bogharian will be remembered with great respect for his unparalleled scholarship and knowledge and also for His kindness and wisdom, which will remain a source of inspiration for me, as for many others.

Yours Respectfully,

*Lucy-Anne Hunt*

Dr. Lucy-Anne Hunt,  
Senior Lecturer in History of Art

# MARTIN-LUTHER-UNIVERSITÄT HALLE-WITTENBERG

Fachbereich Kunst- und Altertumswissenschaften  
Institut für Orientalistik  
Seminar Christlicher Orient und Byzanz

Martin-Luther-Universität Halle-Wittenberg, PF 8, 06109 Halle (Saale)



Ամենապատիւ

Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին

Երուսաղէմի հայ պատրիարքին

Armenian Patriarchate

P. O. Box 14246

Jerusalem, Old City

Israel

Հալլէ, 21.12.1996

Ամենապատիւ սրբազան հայր,

Խոր կակնծով տեղեկացանք Հայաղիտութեան մեծ նախագետ Նորայր արքեպիսկոպոս Պողարեանի մահուան մասին: Այս տարի սմբուսնը ու Յակոբեանց վանքի մատենադարանում աշխատելիս մեզ բախտ վիճակուեց վայելելու վաստակաշատ գիտնականի և հույնականի ձեռագրերի ուսումնասիրութեան և խնամքի ուղղութեամբ տարուած աշխատանքների պատուները և անձամբ զղալու նրանից ճառագող մարդկային հմայքը: Երուսաղէմի ու Յակոբեանց վանքի հայոց բնասիրութեան դպրոցի ուսուցչապետի օրհնութիւնն ու խորհուրդները մեզ պիտի ուղեկցեն մեր հետագա Հայագիտական պրոյստումների ճանապարհին:

Մի կարեկցանքի խոսքը խնդրում ենք այսօր միացնել հանգուցեալին հրաժեշտ տալու եկածների մաղթանքներին:

Խորին յարգանքով

*Heinrich Heine*  
պրոֆ. Հերմանն Գոլտց

Լեռնեանի Դրոսթ-Լեգատիւն  
պր. Արմենուհի Դրոսթ-Արդարեան

Յոհաննէս Լեփսիուսի արխիւ

Աստածարանութեան ֆակուլտետ

Հալլէի Մարտին Լութերի անվ. համալսարան

Արեւելագիտութեան ինստիտուտ